**Արձանագրություն N 11**

**ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի մրցույթի փուլի գնահատող հանձնաժողովի նիստի**

**/ՀՀ կառավարության՝ ի դեմս Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության միջև 21.11.2016թ. կնքված վարձակալության պայմանագրի անկախ տեխնիկական աուդիտորական ծառայության ձեռքբերման /**

**Երկիր**

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան 19 մայիսի 2026թ.

**Ընթացակարգ**

Անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթի փուլ:

**Ծրագիրն իրականացնող մարմնի անվանումը**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:

**Ծրագրի անվանումը**

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված ««Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի» շրջանակներում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2031թ.թ անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:

**Նիստին մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Քանքանյանը,

Հանձնաժողովի անդամներ Ա. Մարգարյանը, Ա. Սիմոնյանը, Ս. Ասրյանը, Ս. Ալեքսանյանը, Ա. Առուշանյանը և Ա. Սերգոյանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Մրցույթի փուլի հրավերի վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.**

---

ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ծածկագրով գնման ընթացակարգի մրցույթի հրավերի հայտարարության վերաբերյալ 15.05.2026թ. ստացվել են հարցադրումներ և դրանց վերաբերյալ 19.05.2026թ. տրամադրվել պարզաբանում՝

**Հարց 1** Խնդրում ենք պարզաբանել հայտի վավերականության պահանջվող ժամկետը: Համաձայն Գնառաջարկի հարցման (RfP) 7.4 կետի՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի 90 օր: Մենք ենթադրում ենք, որ մեր հայտի վավերականության ժամկետը նույնպես պետք է լինի 90 օր: Խնդրում ենք հաստատել:

**Պարզաբանում 1** Հայտի ապահովման և հայտի վավերականության ժամկետները պետք է կազմեն հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

**Հարց 2.** «Ֆինանսական առաջարկ» բաժնի 5.3 կետի համաձայն՝ «Ֆինանսական առաջարկը պետք է ներկայացվի հայկական դրամով կամ երկու և ավելի արժույթներով»: Խնդրում ենք հաստատել, որ մենք կարող ենք ֆինանսական առաջարկը ներկայացնել ՀՀ դրամով (տեղական ծախսերի մասով) և եվրոյով (օրինակ՝ միջազգային ծախսերի մասով):

**Պարզաբանում 2.** ֆինանսական առաջարկը պետք է ներկայացվի որպես մեկ միասնական առաջարկ՝ մեկ արժույթով: Առաջարկը կարող է ներկայացվել, օրինակ՝ ՀՀ դրամով, եվրոյով կամ ԱՄՆ դոլարով, սակայն տեղական և միջազգային ծախսերի համար տարբեր արժույթների համակցված ներկայացումը չի նախատեսվում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կնքվելու է մեկ միասնական գումարով՝ ՀՀ դրամով (նշելով համապատասխան արտարժույթի գումարը):

Եթե մասնակիցների կողմից առաջարկվող գները ներկայացված են արտարժույթով, ապա հայտերի գնահատման նպատակով դրանք վերահաշվարկվելու են ՀՀ դրամով՝ հայտերի բացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով (Համաձայն Հրավերի 8-րդ մասին 8.4 կետի):

**Հարց 3.** Ծառայությունների մի մասի համար մենք կներգրավենք տեղական ենթախորհրդատու: Կգնահատենք, եթե պարզաբանեք, թե պայմանագրի շնորհման /կնքման դեպքում տեղական ենթախորհրդատուն կարո՞ղ է իր հաշիվ-ապրանքագիրը ՀՀ դրամով ուղղակի ներկայացնել Ջրային կոմիտեին, իսկ միջազգային ընկերությունը՝ որպես ոչ ռեզիդենտ, արտերկրից եվրոյով հաշիվ-ապրանքագիր ներկայացնի անմիջապես ՀՀ Ջրային կոմիտեին: Այս դեպքում հնարավոր կլինի խուսափել ԱԱՀ-ի հարցից:

**Պարզաբանում 3.** Պայմանագիրը կնքվելու է մրցույթի արդյունքում ընտրված մեկ հայտատուի հետ, և Պատվիրատուի կողմից վճարումները իրականացվելու են պայմանագիրը ստորագրած կազմակերպությանը՝ պայմանագրով սահմանված կարգով ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Հետևաբար, տեղական ենթախորհրդատուի կողմից Պատվիրատուին առանձին հաշիվ-ապրանքագրի ներկայացում, ինչպես նաև միջազգային կազմակերպության կողմից առանձին հաշիվ-ապրանքագրի ներկայացում նույն պայմանագրի շրջանակներում չի նախատեսվում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կնքվելու է մեկ միասնական գումարով՝ ՀՀ դրամով (նշելով համապատասխան արտարժույթի գումարը), որը ներառելու է պայմանագրի կատարման հետ կապված բոլոր հարկերն ու տուրքերը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան»:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հայտերի բացման օրը՝ 01.06.2026թ. ժամը 16:00-ին, (ըստ անհրաժեշտության կարող է հրավիրվել լրացուցիչ նիստ), որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-7, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | ______ | Տ. Քանքանյան |
| անդամներ | ______ | Ա. Մարգարյան |
| | ______ | Ա. Սիմոնյան |
| | ______ | Ս. Ասրյան |
| | ______ | Ա. Առուշանյան |
| | ______ | Ս. Ալեքսանյան |
| | ______ | Ա. Սերգոյան |
| Քարտուղար | ______ | Ա. Սարգսյան |